Հաստատված է
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» հասարակական կազմակերպության
վարչության՝
« 26 » նոյեմբերի 2004թ.-ի թիվ 26-3 որոշմամբ:
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» հասարակական կազմակերպության
նախագահ՝ Կ. Զադոյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (հետագա տեքստում հիմնադիր) Շիրակի մարզային մասնաճյուղը (հետագա տեքստում՝ մասնաճյուղ) հիմնադրի առանձնացված ստորաբաժանումն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում:

1.2. Մասնաճյուղը գործում է ՀՀ օրենսդրությանը, հիմնադրի և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.3. Մասնաճյուղի անվանումն է.

հայերեն՝ **«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղ,**

անգլերեն՝ **Shirak regional branch of the non governmental organization "Armenian Young Lawyers Association"**

1.4. Մասնաճյուղը գործում է ՀՀ Շիրակի մարզի ողջ տարածքում:

1.5. Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2:

2. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Մասնաճյուղի նպատակներն են Շիրակի մարզում իրականացնել հիմնադրի կանոնադրությամբ սահմանված նպատակները և խնդիրները, իրականացնել հիմնադրի նպատակներից և խնդիրներից բխող ծրագրեր և միջոցառումներ, ներկայացնել հիմնադրին Շիրակի մարզի պետական և ոչ պետական մարմիններում, կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում ու հաստատություններում:

3. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ, գործում է հիմնադրի (գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից, նախարարի հրաման թիվ 2031, վկայական թիվ 164) հաստատած կանոնադրության հիման վրա:

3.2. Մասնաճյուղը ինքուրույն հարկատու (հարկային գործակալ) չէ, իր գործունեության հաշվետվությունը ներկայացնում է հիմնադրին, որը որպես հարկատու գրանցված է ՀՀ հարկային պետական ծառայությունում (հարկային կոդ 01512352):

3.3. Մասնաճյուղը կարող է, հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր անվանումով ունենալ կլոր կնիք և պաշտոնաթղթեր: Պաշտոնաթղթերի ձևերը հաստատվում են հիմնադրի կողմից:

3.4. Մասնաճյուղը, հիմնադրի կողմից սահմանված կարգով, կարող է ունենալ ընթացիկ հաշիվ, որի միջոցները կարող են ծախսվել հիմնադրի հաստատված նախահաշվով:

4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1. Մասնաճյուղի գործունեության և կառավարման հետ կապված ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է հիմնադրին:

4.2. Մասնաճյուղի կառավարման մարմիններն են ղեկավարը և խորհուրդը:

4.3. Մասնաճյուղի ղեկավարը նշանակվում է հիմնադրի իրավասու մարմնի կողմից և գործում է նրա կողմից տրված լիազորագրի շրջանակներում:

4.4. Մասնաճյուղի ղեկավար կարող է նշանակվել հիմնադրի անդամ կամ համակիր անդամ հանդիսացող անձը:

4.5. Մասնաճյուղի ղեկավարը հիմնադրի կողմից տրված լիազորությունների շրջանակներում՝

ա) իրականացնում է մասնաճյուղի ընդհանուր ղեկավարումը և կառավարումը ,

բ) հիմնադրի կողմից սահմանված կարգով կնքում է պայմանագրեր և տալիս է հրամաններ,

գ) ընտրում է մասնաճյուղի աշխատակազմի անդամների թեկնածուներին և ներկայացնում է հիմնադրի նախագահի հաստատմանը, աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,

դ) հիմնադրի կողմից սահմանված կարգով տիրապետում և օգտագործում է մասնաճյուղին հանձնված գույքը և ֆինանսական միջոցները,

ե) ներկայացնում է մասնաճյուղը Շիրակի մարզի պետական և ոչ պետական մարմիններում, կազմակերպություններում և հաստատություններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում,

զ) իրականացնում է հիմնադրի նախագահի գրավոր և բանավոր հանձնարարությունները,

է) նշանակում է մասնաճյուղի պատասխանատու քարտուղարին, որը գործում է հասարակական կարգով,

ը) հիմնադրի նախագահի հանձնարարությամբ հիմնադրում և լուծարում է մասնաճյուղի տարածաշրջանային գրասենյակ (ներ), որի (որոնց) կանոնադրությունը (ները) և ղեկավարի (ների) թեկնածությունը (ները) ներկայացնում է հիմնադիրի նախագահի հաստատմանը:

թ) իրականացնում է այլ աշխատանքներ:

4.4. Մասնաճյուղի ղեկավարը սույն կանոնադրությամբ իրեն վերապահված առանձին լիազորությունների կատարումը, հիմնադրի համաձայնությամբ, կարող է վերալիազորել այլ անձանց:

4.5. Մասնաճյուղի ղեկավարը հաշվետու է հիմնադրին: Մասնաճյուղի ղեկավարը հիմնադրի նախագահին և գործադիր տնօրենին մասնաճյուղի և իր գործունեության վերաբերյալ ներկայացնում է ամենամսյա, եռամսյա, վեցամսյա և տարեկան հաշվետվություններ,

4.6. Մասնաճյուղի աշխատանքների տարեկան արդյունքները հաստատվում են հիմնադրի նախագահի կողմից:

4.7. Մասնաճյուղի գործունեության վերահսկողությունը իրականացվում է հիմնադրի նախագահի և գործադիր տնօրենի կողմից:

4.8. Մասնաճյուղի խորհուրդը մասնաճյուղի ղեկավարին կից խորհրդակցական մարմին է, որը բաղկացած է հիմնադրի՝ մասնաճյուղում հաշվառված անդամներից և համակիր անդամներից (հետագա տեքստում՝ անդամներ) :

4.9. Մասնաճյուղի խորհուրդը քննարկում է մասնաճյուղի գործունեության, ծրագրերի, անդամության, մասնաճյուղի և մասնաճյուղի գրասենյակ(ներ)-ի կառավարման հետ կապված հարցեր:

4.10. Մասնաճյուղի խորհուրդը կարող է որոշումներ կայացնել, եթե մասնակցում են մասնաճյուղի անդամների մեծամասնությունը: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ և մասնաճյուղի ղեկավարի համար կրում են առաջարկությունների բնույթ:

4.11. Մասնաճյուղի ղեկավարը ի պաշտոնե հանդիսանում է խորհրդի ղեկավարը և ղեկավարում է խորհրդի աշխատանքները:

4.12. Խորհուրդը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել մասնաճյուղի ղեկավարի որոշմամբ կամ

խորհրդի անդամների մեծամասնության գրավոր պահանջով՝ խորհրդի ղեկավարի կողմից:

4.13. Խորհրդի նիստերի արձանագրումը կատարվում է մասնաճյուղի պատասխանատու քարտուղարի կողմից, իսկ խորհրդի կողմից ընդունած որոշումները ստորագրվում են մասնաճյուղի ղեկավարի և պատասխանատու քարտուղարի կողմից:

5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Մասնաճյուղի գույքը և միջոցները գոյանում են հիմնադրի կողմից հատկացված հիմնական և շրջանառու միջոցներից, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվություններից, դրամաշնորհներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2. Մասնաճյուղը գույքի և միջոցների նկատմամբ ունի միայն տիրապետման և օգտագործման իրավունք:

5.3. Մասնաճյուղը չունի առանձին հաշվեկշիռ:

5.4. Մասնաճյուղի գույքի մեջ մտնում են նյութական և ոչ նյութական օբյեկտները:

5.5. Մասնաճյուղը հիմնադրի կողմից սահմանված կարգով կարող է ունենալ ընթացիկ հաշիվ, որի միջոցները ծախսվում են հիմնադրի հաստատած նախահաշվով:

5.6. Գույքի նյութական օբյեկտներն են հիմնական և շրջանառու միջոցները, դրամական միջոցները, նպատակային օգտագործման ֆոնդերը և այլն:

5.7. Գույքի ոչ նյութական օբյեկտներն են խորհրդանիշը, հեղինակությունը և այլն:

5.8. Մասնաճյուղի աշխատակիցների հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի վճարման կարգը հաստատվում է հիմնադրի կողմից:

5.9. Մասնաճյուղում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև հիմնադրի կանոնադրությամբ և աշխատակազմի կանոնակարգով:

6. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Մասնաճյուղի կարող է վերակազմակերպվել ու լուծարվել հիմնադրի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Լուծարման դեպքում մասնաճյուղի ամբողջ գույքը անցնում է հիմնադրին: